№ 161 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 25 1901 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 25 № 161

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին հատարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդեօք չո՞ւտ կը վերջանայ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.«Անօթի էի»։

ԱՐԴԵՕՔ ՇՈՒՏ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՑ

—

Կը շարունակվի արդեօք տնտեսական տագնապը, թէ նա թուլանալու վրա է—ահա հետաքրքրական մի հարց, որ յաճախ հանդէս է գալիս և որին պատասխանելը հեշտ չէ, քանի որ պակասում են ճիշտ վիճակագրական և այլ տեղեկութիւններ։

Շատերը Ռուսաստանում յոյս ունեն, որ Նիժեգօրոդեան առաջիկայ տօնավաճառում առևտուրը աջող կը գնայ, կը ծախվեն գործարանական ապրանքներ մեծ քանակութեամբ, կը կապվեն նոր պայմանախօսութիւններ, կը տրվեն նոր պատուէրներ և գործարանները կարողութիւն կը ստանան աւելի ևս ընդարձակելու իրանց գործունէութիւնը։ Իսկ երբ գործարանները կը սկսեն մեծ ոյժով գործել, նորից կը պահանջվեն վառելիքի նիւթեր՝ նաւթ, քարածուխ, տորֆ, և ուրեմն պէտք կը զգացվի վերջիններիս արտահանութիւնը մեծացնել և ընդարձակել։

Սակայն այն հանգամանքները, որոնք առ այժմ պարզվել են, ցոյց են տալիս, որ տագնապի ոյժը զգալի կերպով կոտրելու համար դեռ չեն ստեղծվել բաւականաչափ նպաստաւոր պայմաններ։ Հունձը բաւարար չէ այն տեղերում, որոնք մեծ քանակութեամբ ապրանքներ էին սպառում։ Եւրոպական Ռուսաստանը կունենայ միջակ և միջակից ստոր բերք։ Համեմատաբար լաւ են Հիւսիսային Կովկասը, Անդրկովկասը և Բեսարաբիան, ուր թէև տեղի են ունեցել մասնաւոր վնասներ կարկտից, հեղեղից, մորեխից և այլ պատահարներից, սակայն ընդհանրապէս բերքը բաւարար է։

Պէտք է նկատել, որ չը նայելով տնտեսական տագնապին և վաճառականոցի մեռեալ դրութեան, ռուսաց գործարանները չը համաձայնեցին նուազեցնել և կրճատել իրանց արդիւնագործութիւնը։ Կարմի բոպէ, երբ գործարանատէրերը կամենում էին ընդհանուր համաձայնութեամբ կրճատել իրանց գործը, սակայն յետոյ ուրիշ կերպ մտածեցին և, դրդված մրցութեան ուրուականից, առաջ տարան իրանց գործը նախկին ոյժով, իսկ մի քանիսները նոյն իսկ աւելի ընդարձակ ծաւալով։

Աչքի առաջ ունենալով մինչև այժմ պարզված պարագաները, պէտք է այն եզրակացութեան գալ, որ տնտեսական տագնապը ոչնչացնելու և վերջացնելու համար դեռ չեն ստեղծվել լիակատար պայմաններ։ Պատրաստած ապրանքների սպառման համար երկրի մէջ չը կայ բաւականաչափ ոյժ։ Զոկ բան է, եթէ Պարսկաստանը, որի առևտուրը Ռուսաստանի հետ օրէցօր ընդարձակվում է, մի անգամից մեծ պահանջներ հանդէս բերէ և մեծ պատուէրներ տայ։ Այդ հանգամանքը կարող է փոքր ինչ ազդել ապրանքների վաճառահանութեան վրա և գործ տալ գործարաններին առաջիկայ ձմեռվայ համար։

Շուտով վերջնականապէս կը պարզվի հունձի վիճակը Ռուսաստանի զանազան շրջաններում և Նիժեգօրոդեան տօնավաճառը ցոյց կը տայ առք ու վաճառքի բնաւորութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վերին աստիճանի դեղեցիկ գոյներով է նկարում «Սուրհանդակ» լրագիրը Վիէննայի Մխիթարեանների գործունէութիւնը Կ. Պոլսում։ Անցած տասնիններորդ դարի առաջին կէսում Վիէննայի Մխիթարեանները Կ. Պոլսում ամեն ջանք գործ էին դնում, որ կաթոլիկ հայերը իրանց ազգային իրաւունքները չը պաշտպանեն, լուսաւորչական հայերի հետ միաբան չը գործեն, ուստի եւ հակառակվում էին Վենետիկի Մխիթարեաններին, որոնք այդ ազգային շարժման գլուխն էին անցել։ Այժմ այլ է դրութիւնը։ Վիէննայի Մխիթարեան վանքում առաջ եկաւ կրօնաւորների նոր սերունդ, որի սկսած գրական եւ ազգային գործունէութիւնը շատ լաւ յայտնի է վերջին տասն տարիներում։ Այդ երիտասարդ սերունդից երկու վարդապետ, Հ. Մէնէվիշեան եւ Հ. Գալէմքեարեան գնացին Կ. Պոլիս՝ այնտեղի Մխիթարեան դպրոցը կառավարելու համար։ Նկատենք, որ Վենետիկի Մխիթարեաններն էլ ունեն երկու դպրոց թիւրքայ մայրաքաղաքում։ Բայց վիէննացիները ահա ինչ դրութեան են հասցրել իրանց կրթական հաստատութիւնը.

Կենդրոնական վարժարանի հաւասար կըրթութիւն մը կուտայ, եւ առեւտրական ասպարէզի մարդ կը պատրաստէ. անձուկ մըտածումներ, կղերական ոգի, զուտ կրօնական կրթութիւն, ու «արտաքոյ Հռոմայ եկեղեցւոյ չիք փրկութիւն» հեռացուցած են այդ վարժարանին շրջափակէն։ Հայոց եկեղեցւոյ զաւակը ու հայ հռոմէականի մը զաւակը իրարու նկատմամբ լայն մտածումով կը դաստիարակուին։ Մերայիններէն շատերը իրենց զաւակը վիէննացիներուն դաստիարակութեան յանձնելը նախամեծար կը համարին, եւ ատոնց թիւը տարուէ տարի կաւելնայ, չնորհիւ այն լայն գաղափարին, որ կը տիրէ վարժարանը վարողներուն մէջ։ Ասոր իբր հաւատիք շատ մը օրինակներ կրնանք թուել։ Բայց միայն մէկը յիշեմ, որ դեռ թարմ է։ Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան հանդէսին ոչ մէկ վենետիկցի կար։ Չեմ կարծեր, որ ատոնց հրաւիրագիր դրկուած չըլլայ։ Բանկալթիի վիէննացիներէն երեք վարդապետ ներկայ էին. երեքն ալ համակրելի ու ամենուս ընտանի։ Կ. Պոլսոյ վենետիկցիները շատ կղզիացած կապրին, մինչդեռ վիէննացիները անխտրականութեան ոգիով աւելի կը հիւրասիրեն ու կը հիւրասիրուին։ Ուսումնական խորհրդի ատենապետը իրենց հանդէսին ներկայ կը գտնուի, իրենք ալ մերիններուն։ Այս երեւոյթը վիէննացիներու մատենագրական ու գիտական հրատարակութիւնները կարդացողներուն նորանշան չերեւար։ Անոնք, որ «Մաղկեփունջերը» կը ճանչնան, անոր գրածներուն թափանցած են, վիէննացիներուն այդ ընթացքը ոչ կեղծ, ոչ բռնազբօսիկ եւ ոչ չեմ գիտեր ինչ պիտի մեկնեն։

Վիէննացիներուն այդ ընթացքը գրգիռը պէտք չէ՞ որ ըլլայ վենետիկցիներուն, իրենց կրթական ծրագիրը բարեփոխելու եւ մեզի հետ աւելի ընտանի ըլլալու։

Ներուի բարեկամական այս դիտողութեան։ Անպատճառ, կասենք մենք մեր կողմից. վենետիկցիները նոր չը պիտի սովորեն այդպիսի ընթացք բռնելը։ Նկատի առնելով ս. Ղազարի վանքում ներկայումս աչքի ընկնող համակրելի, եռանդոտ գործունէութիւնն ու ուղղութիւնը, մենք չենք կարող չը հաւատալ, որ հին, կրօնամոլական խորութիւնները կը վերանան, տեղի տալով մի ընդհանուր, համերաշխ գործունէութեան մտաւոր ասպարէզում։ Մինթէ հայի ճակատին գրված է լինել միմիայն կրօնական համայնք. մինթէ մեզ այսուհետեւ էլ պիտի հետաքրքրէ միմիայն դաւանութիւնը, եկեղեցու ծէսը, հնադարեան այս կամ այն կղերական կարծիքը, եւ մենք դրանցից դուրս ոչինչ ուրիշ բան չը պիտի տեսնենք այս լուսաւոր, մեծ աշխարհում։ Մենք ունենք աւելի խոշոր, աւելի կենսական շահեր, որոնք հայութեան լինելու կամ չը լինելու հարցն են վճռում։ Այդ ընդհանուր, համազգային ասպարէզում մենք, ամենքս, ինչ դաւանութեան էլ պատկանելու լինենք, կարող ենք առանց կրքի եւ եղբայրատեցութեան, սիրով ու համերաշխութեամբ տանել մեր պարտաւորութիւնները։ Այս տարրական ճշմարտութիւնը այժմ լաւ հասկացել է Մխիթարեան միաբանութիւնը, այն մեծ հիմնարկութիւնը, որ մինչեւ այժմ ահագին ներգործութիւն է ունեցել հայութեան վրա։ Մի ամսից յետոյ այդ միաբանութիւնը պիտի տօնէ իր գոյութեան երկուհարիւրամեակը։ Անցեալի մասին չը խօսենք, այլ ցանկանք, որ միաբանութեան ապագան լինի այն ուղղութիւնը, որ բռնել են վիէննացի Մխիթարեանները Կ. Պոլսում։ Միայն այդպիսի գործունէութիւնը կարող է ճշմարիտ պարծանք դառնալ միաբանութեան եւ մեզ համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«Ա Ն Օ Թ Ի Է Ի...»

(Գիւղացու ցաւերից)

—

Աշունը էր, սեպտեմբեր ամիսը։ Բայց գիտէք՝ ինչ է այդ ամիսը գիւղացու համար։ Ի՞նչ է մայիսը քննութիւն տուող աշակերտի համար։ Մայիսը ամբողջ տարվայ աշխատանքի գնահատութեան ամիսն է աշակերտի համար։ Տեսնում էք մէկն ուրախ-ուրախ, գովասանական թերթն ու ընծաները՝ իր աշխատանքի, քաղցր քրտինքի ապացոյցները ձեռին, սրտապատառ տուն է վազում, անեցոց էլ ուրախացնելու։ Միւսն էլ տխուր, յօնքերը կիտած, մոլոր ու շուար շրջում է դպրոցի դռանը, տուն գնալ էլ չէ ուզում։ Գնա, գնա, բայց ինչ երեսով, ախր դասատուն չէ փոխել...։ Մայիսը նրան էլ տուել է իր ամբողջ տարվայ ծուլութեան վարձը։

Բայց այդպէս էլ չէ սեպտեմբերը մեր գիւղացու վերաբերմամբ. նա անգութ է, անողոք է. նրա համար խտրութիւն չը կայ աշխատողի ու ծոյլի, վատի ու լաւի մէջ։ Մի օր տեսաք կարկուտը, երկնքի այդ պատուհասը եկաւ, տափնեց գիւղացու արտ ու արօտ, դաշտ ու ձոր, մի քանի բոպէում փչացրեց եւ հարուստի, եւ աղքատի, եւ ծոյլի եւ ջանասէրի՝ ամբողջ տարվայ արիւն-քրտինքի վաստակը. միակ յոյսն ու «դիոլիկը» (ապրուստը)։ Մի ուրիշ տարի՝ քամին է տանում արտերի բերքը, հասկերի գլխից մինչ վայր գատարկում։ Ապա մուկն ու մորեխը, երաշտն ու եղեամը, ժանգն ու ճիճուն, այդ անտէր ճիճուն... Ո՞ր մէկն ասեմ, ինչ որ պատիժ կայ, խիստ պատուհաս՝ երկինքը կարծէք գիւղացու, այդ խեղճ գիւղացու համար է հնարել։

Բայց այդ տարին, փառք Աստուծու, բան չը կար։ Արտերի կէսն արդէն քաղած էր (մեզանում ցուրտ է, այդպէս է լինում), կէսն էլ կարմրած, մեծ-մեծ հասկերը խորը կռացրած քաղցոր են կանչում։

Իրիկնադէմ է։ Վառ արեւը, երկինք-գետնի մեծ հնոցը՝ կրակի պէս կծում է. անձրեւ պիտի գայ։ Ամպերը, գորշ ու մութ ամպերը, սեւ-սեւ դրօշների պէս մէկը միւսի յետքից դուրս են գալիս սիրուն սարերի սիզաւէտ լանջից։

Գրոռ ու... գոռում է յանկարծ երկինքը հեռուից։

Գիւղում զալմաղալ, խիստ հարայ-հրոց խառնվել են իրար։ Կալերի էրթի փոշու բաց ամպն էլ ողջ գիւղը գրկած այդ հարայ-հրոցը երկինք է տանում, ամպերին խառնում։ Ապա մի այնտեղ, այնտեղ նայեցէք. Տէփոյենց կալը այն ինչ խաբար է, քէֆ ու խնդում, հարսանիք է, թէ կռիւ, ջարդ, տուր ու դմբոց։ Ո՛չ այս եւ ո՛չ այն։ Կալ են ծեծում այն մարդիկը, այժմ էլ տեսան անձրեւ պիտի գայ, հաւար դրին, «զայրաթ» արին, որ ազատեն կալն ու թեղը, հացն ու էրթը անձրեւից։

—Զօ, Զէյրան ջան, դէ՞ կալն եղաւ, դէ՞ մարալ ջան... անուշ ձայնով կամի վրայից կանչում է կամճարը (կամ քչող), փոքրիկ գունդ ու կծիկ Տրդատը։

—Դէ՞, աղջի, պրծիք,—կանչում է միւս կողմից Կուրղինը՝ տան մեծը թեղը մաղող իր հարսներին,—տղա՞ք, մէ երկուսդ ա էս էրթը ներս լցէք, կալին բոլորն ալեցէք, թոփ էնենք, թոնը (անձրեւ) կուգայ...

Աշխատանքը եռ է գալիս. հինգ հարս կանգնած մեղմ քչփչալով թէֆն են մաղում. նրանց առաջին բլրակի պէս դէզ է կապել կաս-կարմիր ցորենը։ Երեք ջահէլ-ջիւան տղերք թեղն են էրնում, էրթը ջոկում։ Ահա եկաւ Կուրղին տացուն (կարդացողին «տացու», տիրացու են ասում մեզանում) կօտը ձեռին, եւ ծունկը ամուր զարկեց գետնին։

—Ջուալ բերէք, աղջի, պրծիք, կալը թողէք, թոփ էրէք։

Կալը թողին. ութ ջուխտ մուգ-կարմիր ու մոխրագոյն եզներ, երկու զոյգ էլ սեւ գոմշուկներ տուտնդ տալով դաշտ վազեցին. նրանց ետեւից երկու հոտաղ, ամեն ձեռին մի մեծ պատառ, միւս ձեռքով էլ հատ ճիպոտը ուսին դրած, իսկոյն հասան, որ դրկցի կալ ու արտին, թեղ ու օրնին մալը չը թողնեն։ Կուրղին տացուն քրտինք մտած հացն է չափում. երեք հոգով լիք ջուալներն «քեասմի» (հացի չափարան) երդկից ներս են լցնում։ Հարաներն էլ սուս, ձէն ձուգ կտրած, հաւար հաւար դեռ մաղում են։

—Ողջոյն, որդի, բերաքեաւոր (առատ) ըլի թէֆդ։

—Օրհնեա՛, տէր հայր, ծառայ եմ կարգիդ։

—Տարի հախս, Կուրղին, կուտա՞ս։

—Վա՛յ, տէրտէր ջան, էդ ի՞նչ խօսք է. ի՞նչի չեմ տայ։ Ծո, ջըվըլին խատեղ (այստեղ) բերէք։ Եոսուն ջան ենք թամամ տասնը... հինգ կօտ կենէ, չէ՞, տէրտէր ջան։

—Դու ինձէն լաւ գիտես, որդի, էլ ի՞նչի կը հարցնես։

—Էս մէկ, եա Տէր Աստուած, երկուս, երեք, չորս, հինգ,... տասնըհինգ, կօտըմ ա լցնեմ տէրտէր, թամամ (ճիշդ) սօ՛ժառըմ ըլի. ասօր, էգուան (էգուց) հըբլըթ Աստուած երկու ջան ա կաւելցնէ...

Տէրտէրն եկաւ, ոտքի կանգնեց, մեծ փափախը գլխից վերցրեց ու մի սրտանց օրհնեց տական հրատարակութիւնները կարդացողներուն նորանշան չերեւար։ Անոնք, որ «Մաղկեփունջերը» կը ճանչնան, անոր գրածներուն թափանցած են, վիէննացիներուն այդ ընթացքը ոչ կեղծ, ոչ բռնազբօսիկ եւ ոչ չեմ գիտեր ինչ պիտի մեկնեն։

Վիէննացիներուն այդ ընթացքը գրգիռը պէտք չէ՞ որ ըլլայ վենետիկցիներուն, իրենց կրթական ծրագիրը բարեփոխելու եւ մեզի հետ աւելի ընտանի ըլլալու։

Ներուի բարեկամական այս դիտողութեան։ Անպատճառ, կասենք մենք մեր կողմից. վենետիկցիները նոր չը պիտի սովորեն այդպիսի ընթացք բռնելը։ Նկատի առնելով ս. Ղազարի վանքում ներկայումս աչքի ընկնող համակրելի, եռանդոտ գործունէութիւնն ու ուղղութիւնը, մենք չենք կարող չը հաւատալ, որ հին, կրօնամոլական խորութիւնները կը վերանան, տեղի տալով մի ընդհանուր, համերաշխ գործունէութեան մտաւոր ասպարէզում։ Մինթէ հայի ճակատին գրված է լինել միմիայն կրօնական համայնք. մինթէ մեզ այսուհետեւ էլ պիտի հետաքրքրէ միմիայն դաւանութիւնը, եկեղեցու ծէսը, հնադարեան այս կամ այն կղերական կարծիքը, եւ մենք դրանցից դուրս ոչինչ ուրիշ բան չը պիտի տեսնենք այս լուսաւոր, մեծ աշխարհում։ Մենք ունենք աւելի խոշոր, աւելի կենսական շահեր, որոնք հայութեան լինելու կամ չը լինելու հարցն են վճռում։ Այդ ընդհանուր, համազգային ասպարէզում մենք, ամենքս, ինչ դաւանութեան էլ պատկանելու լինենք, կարող ենք առանց կրքի եւ եղբայրատեցութեան, սիրով ու համերաշխութեամբ տանել մեր պարտաւորութիւնները։ Այս տարրական ճշմարտութիւնը այժմ լաւ հասկացել է Մխիթարեան միաբանութիւնը, այն մեծ հիմնարկութիւնը, որ մինչեւ այժմ ահագին ներգործութիւն է ունեցել հայութեան վրա։ Մի ամսից յետոյ այդ միաբանութիւնը պիտի տօնէ իր գոյութեան երկուհարիւրամեակը։ Անցեալի մասին չը խօսենք, այլ ցանկանք, որ միաբանութեան ապագան լինի այն ուղղութիւնը, որ բռնել են վիէննացի Մխիթարեանները Կ. Պոլսում։ Միայն այդպիսի գործունէութիւնը կարող է ճշմարիտ պարծանք դառնալ միաբանութեան եւ մեզ համար։

Թէֆը, կամն ու կալը, մաճն ու խոփը, մալն ու տունը, մեծ օջախը Տէփոյենց։ Ապա ձեռը դրեց Կուրղինի գլխին ու ծէրէ ծէր մի պահպանիչ էլ ասեց։ Մինչդեռ տղաքը տէրտէրի լիք ջուալները չալկեցին, Կուրղին տացուն էլ ղութիկը ծնկին դրած սեւ ճակատի ծոր քրտինքը չուխի փեշով սրբելով, մի պապիրօս ոլորեց, ահա թէֆի գլխին կանգնեց երկու աչքով կոյր աչուղը, սաղը մէջքին, փայտը ձեռին, մի ձեռով էլ ամուր յենված տղի ուսին։

—Բերաքեաւոր էղնի, ախպէր, Աբրահամու օջախ էղնի էս օջախդ, օխտը անուն սուրբ կարապետ քեօսակ (օգնական) էղնի մարդ ու մալիդ... փայրմ տուէք կուր ու անտէր աչըղին...

—Աղջի, մաղըմ ցորեն լցէք մարդուն պարկը։

—Շնորհակալ եմ, Աստուած մէկիդ հազար, բիւր տայ, կալըդ օրհնէ, քեասմադ լցնէ, տուն ու դուռդ չար աչիչէ, գէշ փորձանքէ ազատ պահէ... Հազար ու բիւր օրհնէնք, բարեմաղթանք թափելով կոյր աչուղը ոտքը ուղղեց միւս կալը։

Էլ ասորի, խպտի տէրտէր, գաղթական ու մուրացիկ, նախրճին ու հորթրճին (հորթարած), նրանց յետքից զորուղչին, մրոտ, աղտոտ սեւ դարբինը, նոյն իսկ գիւղի կաղլիկ չարչին, զզիր, ժամկոչ, այս ամենը մէկ մէկ եկան պարկերն ուսին, փայտերն առան ու գնացին։ Բայց այն թէֆի, այն մեծ թէֆի, ականջն էլ չիմացաւ։

Ուշ գիշեր էր, երբ Տէփոյենց կալը պրծան եւ հոռսելի, եղան ու թի, փոցխ, ցախաւել հաւաքած, դաղրած, բեզրած տուն դարձան, որ հաց ուտեն, ապա մի քիչ հանգստանան։

—Բարի իրիկուն, Կուրղին տացու, ասաց նստեց մի քաղքցի։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յուլիսի 10-ին

Շարունակ գանգատներ ենք լսում Եալախից Շուշի տանող խճուղու մասին։ Ամեն տեսակ տառապանքներ են կրում այս խճուղու վրա ճանապարհորդները. հաժարեա չէ եղել մէկը, որ գոհ լինէր, որը սատիկ տօթից ու փոշուց է խեղդվել, որը աւազակների սրի եւ հրացանի տակից մազապուրծ է եղել, որը կառապանի կամ կօնդուկտորի յիշոցները լսել, որը իջեւանի կառավարչի կապրիզին ենթարկվել ու ամբողջ 7—8 ժամերով սպասել ձիեր չը տալու պատճառով։

Սակայն մեր շուշեցիներից երկու հոգի, պ.պ. Քոչարեան եւ Առստամեան (վերջինս այժմ հանգուցեալ) այդքան ջանքերից ազատվելու համար ժամանակ են Շուշին լուսաւորել։ Բայց ուշ համար։ Ահագին ծախքեր են արել, բերել են տուել աւտոմոբիլներ (ինքնաշարժ կառքեր) Շուշու եւ Եալախի մէջ բանեցնելու համար։ Ով որ երջանկութիւն է ունեցել նստելու այս թռչող մեքենայի վրա, նա կարող է երեւակայել, որ մարդկային տանջանքները վերջացնելու համար շատ միջոցներ կան. փոխանակ գիշերելու գետի մօտ կամ Աղդամ կայարանում, դուք կարող էք Եալախից աւտոմոբիլով ամենաուշը 4 ժամում հասնել վերոյիշեալ գետի եզերքը. թէյդ Եալախ խմիր, եւ Շուշի ճաշիր...

Ահա մի համակրելի եւ ուշադրութեան արժանի գործ, որ սկսել է պ. Քոչարեան։ Մինթէ աւելին կարելի է պահանջել այդ պարոնից, որ աւելի քան 50—60 հազար բուբլի է ծախսել աւտոմոբիլով երթեւեկութիւն կանոնաւորելու։ Եւ ուշ համար,—միայն մեզ պէս լոկ խօսող շուշեցիներիս համար։ Աւելի լաւ չէր լինի, եթէ ցանկանում ենք ազատվել նեղութիւններից, օգտվենք այս հրաշալի միջոցից. փոխանակ միլիոն թաղելու Բալախանու հողերի տակ եւ ոչինչ չը ստանալու, կարելի է զարկ տալ վերոյիշեալ ձեռնարկութեան, կազմել մեծ ընկերութիւն եւ թէ կը ստանանք լաւ տոկոսներ, թէ կունենանք լաւ ճանապարհ։

Ս. Շամախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պետրօվսկ, յուլիսի 22-ին
(Հեռագրով)

Խնդրում եմ տեղ տալ հետեւեալին.—Այն բոլոր անձանց, որոնք յուլիսի 21-ին ուղարկել էին ինձ շնորհաւորութիւններ, յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը եւ մաղթում եմ նրանց բարեբախտ ու երկար օրեր։

Արիստակէս արքեպիսկոպոս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պեատիգորսկ, յուլիսի 2-ին

«Մշակի» 129 համարում Պեատիգորսկից ձեր թղթակիցը, ի միջի այլոց, հաղորդում է, թէ մի ատամնաբոյժ փորել է իւրուր տեղ մի քանի առողջ ատամներ, որպէս զի լցնէ ու աւելի շահվի։ Որովհետեւ ես էլ պարապում եմ ատամնաբուժութեամբ հանքային ջրերում, Պեատիգորսկում, հարկ եմ համարում զանազան անտեղի թիւրիմացութիւնների առաջն առնելու համար յայտնել, որ ես ոչ մի կապ չունեմ յիշեալ հաղորդագրութեան հետ։

Ատամնաբոյժ՝ Լեւոն Կոստանդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ վերացվել է այն մաքսը, որ դրված էր ամերիկեան վազի սունկերի վրա։ Այսուհետեւ ամերիկեան խաղողի որթը կը ներմուծվի առանց մաքսի։

—

Մեզ հաղորդում են, որ հայոց ներկայացումները սկսվելու են Թիֆլիսում սեպտեմբեր ամսի 9-ին եւ տեւելու են մինչեւ հոկտեմբերի 9-ը. այնուհետեւ Թիֆլիսի թատրօնական ընկերութիւնը իր խումբը երեք ամսով ուղարկելու է Բագու, որտեղից նա վերադառնալով նորից մի շարք ներկայացումներ կը տայ Թիֆլիսում յունվար եւ փետրվար ամիսներին։ Խմբի մէջ մտնելու են մեր դերասանական լաւագոյն ոյժերը։ Նորերից հրաւիրվելու է օր. Թ. Սունդուկեանց։ Բեմիսեսորութեան համար բանակցութիւններ են սկսված ռուս խմբի դերասան Դարսկու (պ. Պարեանի) հետ։ Թիֆլիսում տրվելու է ամիսը վեց ներկայացում, Բագուում՝ ութ։ Թիֆլիսի թատրօնական ընկերութեան վարչութեան կողմից դերասանների հետ պայման են կապում պ.պ. Ե. Տիգրանեան եւ Տ. Յովհաննիսեան։

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ցուցահանդէսի համար երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօրը պատրաստել է տուել լուսանկարչական ալբօմներ, որոնք ներկայացնում են երկրի բոյսերը, կենդանիները, ագարակները, անտառները եւ մի շարք տեսարաններ, որոնք կապ ունեն տեղական գիւղատնտեսութեան հետ։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք. «Համաձայն իշխան կառավարչապետի միջնորդութեան, երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը աւելացրել է այն դրամական օժանդակութեան քանակութիւնը, որ այդ մինիստրութեան կողմից նշանակված էր յօգուտ Կովկասեան ցուցահանդէսի։ Մինիստրութիւնը նախ նշանակել էր այս նպատակի համար 7,500 բուբլի, իսկ այժմ—10,000 բուբլի, այն պայմանով միայն, որ աւելացրած 2,500 բուբլին Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը ստանայ ոչ այս տարի, այլ հետեւեալ տարի։ Բացի սրանից՝ ուշադրութեան առնելով իշխան կառավարչապետի վկայութիւնը, թէ Կովկասեան ցուցահանդէսի կոմիտէտը դրամական դժուարութիւններ պիտի կրէ սպասված դէֆիցիտը ծածկելու համար, երկրագործութեան մինիստր Երմոլով գրաւոր հաղորդակցութիւն սկսեց ֆինանսների մինիստրի հետ, որ նա եւս աջակցութիւն ցոյց տայ Կովկասեան ցուցահանդէսին՝ օժանդակութիւն նշանակելով նրան ֆինանսների մինիստրութեան միջոցներից»։

—

Մոսկվայի ռուսաց բիբլիոգրաֆիական ընկերութեան բիւրօն մշակել է վերջնական խմբագրութեամբ կանոններ այն յօբելեանական կոմիտէտի մասին, որ պէտք է հանդէսներ կազմակերպէ ռուսական մամուլի 200-ամեայ յօբելեանի առիթով։ Համաձայն այս կանոնների՝ կոմիտէտի անդամներ պէտք է լինեն՝ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, համալսարանի ռէկտորը, քաղաքագլուխը, բիբլիոգրաֆիական ընկերութեան վարչութեան, նախապատրաստական բիւրոյի, գիտական-գրական ընկերութիւնների անդամները եւ պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչները։ Կոմիտէտի պարտաւորութիւնն է մշակել հանդէսների մանրամասն ծրագիր, կազմել հանդիսաւոր յօբելեանական նիստ համալսարանում, ներկայացնել ցուցակ բոլոր պարբերական հրատարակութիւնների, որոնք 200 տարվայ ընթացքում լոյս են տեսել Ռուսաստանում, կազմել ցուցահանդէս եւ հրապարակական դասախօսութիւն, հրաւիրել պարբերական հրատարակութիւնների գործիչների առաջին համառուսական ժողով եւ հիմնել ապաստարան մամուլի այն աշխատաւորների համար, որոնք կորցրել են աշխատանքի ընդունակութիւնը։

—

Պետերբուրգում կազմվել է մի նոր ընկերութիւն, որի նպատակն է տարածել թէ ներքին եւ թէ արտասահմանեան շուկաներում տնայնագործական աշխատանքի արտադրութիւնները։ Ընկերութիւնը գլխաւորապէս պէտք է աջակցէ գիւղացիների տնայնագործական արտադրութիւնների տարածմանը։ Ընկերութիւնը առեւտրական նպատակների չէ ձգտում. նրա դրամագլուխը 25,000 բուբլի է։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, մտադիր է լուրջ ուշադրութիւն դարձնել կովկասեան թէյի տնկարանների վրա։ Այդ գործի աջող զարգացման համար, նոյն իսկ մասնաւոր սեփականատէրերի տընկարանները կուղարկվեն ժամանակաւոր, որոնք առանց որ եւ է վարձի աջակցութիւն ցոյց կը տան սեփականատէրերին, վերակարելով աշխատանքները տնկարաններում եւ հետեւելով, որ թէյի թուփի բազմացումը եւ հոգատարութիւնը կանոնաւոր լինի։

—

Անդրկովկասեան երկաթուղու բոլոր գծերը այժմ կցված են ռուսական երկաթուղիների այն բոլոր գծերի հետ, որոնցով հաղորդակցութիւնը լինում է ուղղակի, առանց մի գնացքից միւսը տեղափոխվելու։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ներկայ տարվայ սեպտեմբերի կէսին կը հրաւիրէ առանձին խորհրդակցական մասնաժողով՝ քննելու մի շարք հարցեր, որոնք վերաբերում են կանանց արհեստագիտական կրթութեանը Ռուսաստանում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ տօրֆի հրդեհները Պետերբուրգի շուրջը շարունակվում են մեծ չափերով։ Հրդեհները առանձնապէս մեծ տարածութիւն են բռնում Ֆինլանդական երկաթուղային գծի մօտերքում։ Մի քանի տեղերում այդ հրդեհներից սկսել են այրվել նաեւ անտառները։ Յուլիսի 19-ին, Պետերբուրգից ոչ հեռու, Ժերնովկա գիւղի մօտ, էլի մի քանի հրդեհներ սկսվեցին։ Հետաքրքրականն այն է,—ասում է Պետերբուրգի լրագիրներից մէկը,—որ մինչեւ հիմա փոքր ի շատէ լուրջ միջոցներ չեն ձեռնարկված հրդեհները հանգցնելու համար, այն ինչ հրդեհները ծագում են խիտ բնակչութիւն ունեցող ամարանոցներին կից եւ Պետերբուրգին շատ մօտ տեղերում։

—

Անգլիահպատակ սըր Ալբէրտ Վիչաու միջնորդութիւն է յարուցել կառավարութեան առաջ, որով խնդրում է թոյլ տալ իրան բանալու Պետերբուրգում մի արական գիմնազիա, որի մէջ դասաւանդութիւնը կատարվէր անգլիական լեզուով, բացի ռուսաց լեզուի, պատմութեան եւ կրօնի դասերից։

—

«Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված է Բարձրագոյն հաստատված նոր կանոնադրութիւնը գիւղատնտեսական փորձնական հիմնարկութիւնների մասին։ Այս հիմնարկութիւնները, որոնք պէտք է գտնվեն երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան հսկողութեան տակ, լինելու են երեք տեսակ,—1) փորձնական կայարան, 2) փորձնական տնտեսութիւններ, դաշտեր եւ հողաբաժիններ, 3) ցոյց տալու տնտեսութիւններ եւ հողաբաժիններ։

—

Հրատարակված է, որ արքունի հանքերում ծառայող բանուորներին կենսաթոշակ տալու վերաբերմամբ կազմած ժամանակաւոր կանոնների նախագիծը հաստատված է։ Բանուորները կենսաթոշակ են ստանալու այն դէպքերում,

---

—Ասսու բարին, բարով եկար, աղա ախպար, վեր հրամմէ։

—Լաւ է, տացու, պանիրդ ինձի չես ծախիլ։

—Ինչի չէ, բարեկամս, քեզնէն լաւին պիտի ծախեմ։

—Դէ, ըսէ, ըսէ, աշենք ինչ կուզես։

—Խեսթերդ հաժար հընգի կուտամ, բարեկամս։

Երկար բազար անելուց յետ՝ փութը չորսի երեսուն պուդ պանիր ծախեց Կուրղին տացուն ու կանխիկ փողը դրեց գրպանը։

—Ես էլ չեմ գալ, Կուրղին տացու, կիրակի օրը ձեր տրղաքը պարապ կըլլին, խեսթերս հաժար դու կըշռէ քաղաք ղրկէ, ես կը հաւատամ քու կշեռքիդ։

—Գըլխուս վրա, բարեկամս, լաւ կըլլի։

Հացը կերան վեց հատ ճամբորդ հիւրերի հետ ու քաղցին ելաւ գնաց իրան հիւրընկալող տունը։

—Տեսաք, տըղաք, էս՝ տէրտէրի, էն աշրդի, խեղճ աղքատի օրհնէնքն էր. տեսրիհիմի երեք մանէթ չէին տալ, հիմի չորսի ծախեցինք մեր պանիրը։ Փառք տուածիդ, Տէր, փառք...

—

Աշունք էր դարձեալ։ Բայց կալ-կուտ չը կար. ոչ գեղը գրկող թոզ ու գուժանը, էրթի մեծ ամպը, ոչ հարայհրոց եւ ոչ ղալմաղալ։ Կալերը դատարկ, գիւղը ամայի, կարծես չար վհուկ սեւ պառաւի կախարդիչ ձեռքով քարէ, ճիշդ քարէ արձան էր կտրել։ Արտ ու արօտում չորցած հասկերի, դեղին խոտերի դիք դիք ցողունները գերեզմանոցի սեւ խաչերի պէս մահագուժ հոտ են փչում չորս կողմը։

Ապա մի այնտեղ, այնտեղ նայեցէք. Տէփոյենց կալն է, հարուստ Տէփոյենց։ Բայց ուր են կալւոր, ուր են կամճարներ, ուր թէճը մաղող սիրուն մաղւորներ, ջահէլ ու ջիւան երեք թեղւորներ, ութը զոյգ եղներ, սեւուկ գոմշուկներ՝ Տէփոյենց մեծ տան ամեհի սիւներ, ուր է Կուրղինը, որ ծունկը ուժով գետին զարկէ ու թէճը չափէ, կաս-կարմիր ցորենն ամբարը լցնէ, տէրտէրին հախ տայ, աշուղին փայ տայ, աղքատին բաժին, անցորդին պաշար, նախրճուն, չորուխչուն ու կաղլիկ չարչուն, գզրին, ժամկոչին, ուզող մուրացկին բաժինը հանէ Աստծու տուած այդ առատ բերքից։—Կալը դատարկ էր։

Հէյ գիտի Կուրղին, վիզը կոր ծռած, ձեռքերը ծոցին, չուար ու ժոլոր, մնացել էր անճար պատի տակ նստած։ Մի խումբ գիւղացիք, գրեթէ բոլորն էլ ծեր ու հասակով, աչքերն արցունքոտ, շարան ու շարան նստոտել էին ու մրմնջալով, մեղմ քչփչալով իրար դարդ պատմում, ցաւերն են ասում։ Գիւղի ջահիլները բոլորն անխտիր քաշվել էին դուրս, գիւղից շատ հեռու Բագու կամ Բաթում, Թիֆլիս կամ թէ Ղարս, որ մի գործ գտնեն, մի կտոր թէկուզ գարու ցամաք հաց բերեն տուն իրանց քաղցած ընտանիքին։

—Տղա՛ք, էս տարի ինչ պիտի ըլլի հալերս, ուտելու հաց չունենք, մալին դարման (կեր) չը կայ, ինչով պիտի ձմեռս դիմիկ էնենք մենք, դառն հոգոցով ասաց մի սիպտակ կորացած ծերուկ։

Լուռ էին բոլորն էլ. ոչ ոք ոչինչ չը պատասխանեց. եւ ինչ պատասխանէին աշկարայ բանի դէմ։

—Աստուած ողորմած է, աշխարք անօթի մէկըմ չէ մեռել. ինձէն խօ շատ մալ ու դեսվլաթ չունէիք. է ինչ էնենք, ինքն էր տուել, ինքն առաւ. փառք տուածին... վերջապէս կանչեց մի անկիւնից Տէփո ափարը, Կուրղինի արդէն զառամած հայրը։

—«Աստուած ողորմած է»... էլ էստից ետեւ իմ ինչիս պիտի ողորմէ Աստուած. արտըմ ունէի երկու տարի իրար վրա ճիճուն կերաւ, քաքէն չորցաւ, հարուր սամանոց ամպարս ու քեսմաս-նըշխրքի համար ալուր չը մնաց, գոմերս ա, գիտէք, դէ առջի օրը քար ու քանդ էրի, վրայի փատը Տէփոյենց մալով քաղաք կրեցի, բուռմ ալուր բերի, որ եանի մտովս անօթութենէն երկ օր ուշ մեռնենք... Վայ ձունն էն ապրուստին, ձունն էն դիմիկին, որ քաղքէն բերած, գրվանքով գնած ալրով պիտի էնենք... «Աստուած ողորմած է»... ալ ինչիս պիտի Աստուած ողորմէ... Թող հոգիս մէկէն առնէ պըրծընիմ, այ ողորմութիւն...

—Գասպար, ծօ Գասպար, դու անհաւատ ես, քու աղ խօսքերուդ ասա հըլը քիչ է...

—«Ասա հըլը քիչ է»... ասոյց ա աւել ալ ինչ պիտի ըլլի, մէ հոգիս ունիմ, ան պիտի առնէ... աղ ես շատ շատունց կաղաչեմ, կուզեմ...

—Զէ, օղուլ, չէ, կենա յոյսերդ Աստծմէն միք կտրիլ. ինչ եղաւ ձեզի, ասքանը տարաք, քիչը մա համբերէք... Աստուած ողորմած է... համոզում էր Տէփո ափարն իր մօտ նրաստած, կեանքից բեզրած Գասպարին ու միւս դարդով, ցաւով լցված ծերերին։

«Աստուած ողորմած է»... բայց այդ ճիճուն, անտէր ճիճուն ողորմած չէ. երկու տարի է նա լափում, ոչնչացնում է Ախալքալաքի ամբողջ դաշտավայրի բոլոր բերքն ու առանց կտոր հացի թողնում խեղճ ու անճար գիւղացուն։ Տան եղած-չեղածը վաղուց էր ծախված ու մի կտոր հացի, չոր հացի տուած։ Տէփոյենց տան պէս լի, առատ տունը տափ ու դատարկ է... Բայց աստուածավախ Տէփո ափարը իր յոյսը դեռ չէր կտրում Աստուծուց։

—Ամա՛ն, ապա՛ Ջան, ապա՛, սրտապատառ լաց ու կոծով վազում էր մի տաս տարեկան փոքրիկ տղայ իրան նման մի ուրիշի յետեւից։ Գատի տակին միասին նստոտած մեծերի, ծերերի յանկարծակի երեւալը ակամայ կանգնեցրեց երկուսին էլ։

—Ինչի կուլաս, Սմբատ, էդ ինչ է եղել։

—Այդի (այդ) Տրդատը, քիչըմ հաց ունէի, խլեց ու փախաւ...

Կարծես սառը ջուր լցրին բոլորի ճիպ-ճերմակ գլխին։

—Ծո, ամնչել չես, Տրդատ. հացն ա խլեն, լակոտ, վերջապէս դարձաւ Կուրղինն իր տղին։

—Անօթի էի... ինչ էնիմ, տացու, մեր տունն ա ապաս ըսաց հաց չը կայ...

«Անօթի էի... մեր տունն ա ապաս ըսաց հաց չը կայ»... սուր սլաքի պէս ցցվեցին Տէփո ափօր առանց այն էլ արնոտ, խոցոտ սրտի խորքը։ Աղի լեղի ջուխտակ արցունք ակօս ձգեցին խեղճ ծերուկի չորացած, ցամքած այտերին։ Այն օջախը, որ անցորդին ու ճամբորդին, եւ օտարին, եւ դրացուն, եւ աղքատին եւ մուրացկին, եւ ամենին էր կշտացնում, այսօր չունի մի պատառ հաց, թէկուզ գարու, չոր, ցամաք հաց... Ու Տէփոյենց այդ օջախի փափկիկ մեծցած փոքրիկ տղան Տրդատը անօթի է, անօթի է. այս ինչ կրակ...

—Հէյ Աստուած Ջան, փառքիդ մեռնիմ, էդ՞որ համար էսքան էօմր ու արեւ տուիր քեամբաղդիս։ Հէյ Տէփոյին, էն Տէփոյին թոռը էլլէ սոխսիին (փողոցին) օրթան (մէջ) «անօթի եմ, ունն հաց չը կայ»... բոռբոռայ... դէհ, հոգիս առ, ալ քու վերջին ողորմութենդ աղ ըլլի, փառք տուածիդ, Աստուած Ջան, ասոյց մեծ ցաւ ալ ինչ պիտի ցըցնես...

Ու խիստ ծեծված մանկիկի պէս ծերն սկսեց հեկեկալ...

Ջաւախեցի

երբ նրանք աշխատանքի անընդունակ կը դառնան։ Նախագիծը թոյլ է տալիս, որ հանքագործական ընկերութիւնների անդամ գրվեն նաեւ կանայք, որոնք մչտական աշխատանքներ են կատարում արքունի գործարաններում եւ հանքերում։

—

ԱՂԴԱՇԻՑ մեզ գրում են. «Վերջապէս մենք էլ արժանացանք տեղիս բժշկի ուշադրութեան։ Այսօր առաջին քայլն էր, որ բժ. պ. Միրաքեան արեց, ոչնչացնելով վաճառելու համար հրապարակ բերած սեխերից մի քանի սայլ։ Այստեղ բոլոր մթերքների արուեստական թանդութիւն է տիրում, օրինակ, այն սեխը կամ ձմերուկը, որի 100-ը ազարակում առնում են 2 ր.—2 ր, 50 կ., բազարում ծախում են հատը 10—12 կ.։ Նոյնպէս թանդ են ծախում եւ միւս մթերքները, ձուն հատը 2 կոպ., իւղը 35—40 կ. ֆունտը եւ այսպէս բոլոր մթերքները։ Այդ թանդութիւնը առաջ է գալիս չնորհիւ մի քանի «այեազչիների» (перекупщикъ), որոնց ձեռքին է համարեա բոլոր կենսական մթերքների առեւտուրը։ Այդ բաւական չէ. այդ պարոնները մրգեղէնն այստեղ բերում են բառի բուն նշանակութեամբ «խակ», որովհետեւ լաւերը ջոկում են Բագու արտահանելու համար եւ մնացածները, փչացածները եւ խակերը ծախում են այստեղ, եւ այն, ինչպէս ասացինք, շատ թանդ գնով. սակայն կայ մի բերք, վարունգը, որ թողնում են բոլորովին հանի, դեղնի, որպէս զի կարելի լինի խոշորութեան պատճառով հատը 2 կոպէկով ծախել։ Եւ ինչ էք կարծում, հասարակ դասը մեծ ախորժանքով է գնում այդ 4—5 ֆունտանոց վարունգը, հաշուելով, որ այդպէս շատ էժան է։ Այդ է պատճառը, որ Աղդաշ մտնելիս կը տեսնէք պատերի տակ թափված չքաւորներին դողերոցքից ատամները միմեանց խփելիս։ Գալով մաքրութեան, կարճ կասենք, որ թէ փողոցների կեղտոտութեամբ եւ թէ խմելու ջրովը (որի մէջ միշտ պառկած են լինում գոմէշները) մենք հիանալի ճանապարհ ենք հարթում ժանտախտի համար, եթէ, ատանայի ականջը խուլ, նա բարեհաճի ոտք դնել Անդրկովկաս»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքը անմաքրութիւնների մէջ շաղախված է. փողոցները, շուկաները եւ տների բակերը կեղտոտութիւններով լիքն են։ Թէպէտեւ, Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ, պէտք է ամեն տեղ առանձին հոդ տանել մաքրութեան, նկատի ունենալով ժանտախտի սպառնացող վտանգը, սակայն մեզնում ոչ մի ջանք չէ նկատվում այդ ուղղութեամբ։—Այս ամառ մեզնում շատ հով է անցնում։ Անձրեւ շուտ-շուտ է գալիս։—Օտարաբնակ ախալցխացիներ այս տարի աւելի մեծ թիւով են եկել իրանց ծննդավայրը ամարանոց, քան ուրիշ տարիներ»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Եղանակները այստեղ զով են, մանաւանդ երեկոները։ Զարմանալի է, որ Դիլիջանի պէս լաւ ամարանոցը այսքան քիչ եկողներ կան։ Դիլիջանը Աբաթումանից յետոյ կարելի է առաջին ամարանոցը համարել Կովկասում թէ ջրի, թէ օդի եւ թէ ընութեան գեղեցկութեան կողմից. միակ պակասութիւնը բնակարանների անյարմարութիւնն է, որ ժամանակի ընթացքում կարող է ուղղվել»։

—

Գօրու գաւառի ԱԽԱԼՔԱԼԱՔ գիւղից մեզ գրում են. «Նախաձեռնութեամբ տեղական հայոց դպրոցի ուսուցիչների եւ մանակցութեամբ ամարանոց եկող սիրողների, յուլիսի 15-ին տրվեց նոյն դպրոցի սրահում յօգուտ նոյն ուսումնարանի մի խառն ներկայացումն։ Հայերէն խաղացին «Փաստաբանի մօտ» վոդեվիլը, վրացերէն «Ար մերգերա, ար չամերգերա» վոդեվիլը եւ ռուսերէն «Вспышка у домашняго очага»։ Ներկայացումը գրաւել էր բաւական հասարակութիւն եկուորներից։ Զուտ արդիւնք մնաց մօտ 80 ռուբլի։ Տեղացիները շատ անտարբերութեամբ վերաբերվեցին այս ներկայացման։ Ներկայացման ընդմիջումներին եւ վերջը տեղի ունեցան եւրոպական եւ ասիական պարեր։ Անցեալ շաբաթ վրացիներն էլ տուին մի ներկայացում եւ զերծ չը մնացին նրանց համար ախտ դարձած հնաւանդ սովորութիւնից, այն է՝ անպատճառ խաղալ մի այնպիսի պիէս, ուր հայի բացասական տիպ կայ։ Բաւական է, պարոն ինտելիգենտ վրացիներ, վերջապէս հասկացէք, որ բուն հայ եւ վրացի ժողովուրդը, որոնք ապրում են միասին, ձեզ չեն ուզում լսել եւ շարունակում են առաջվան պէս իրանց հարեւանութիւնը, իրանց բարեկամութիւնը, համկալութիւնը եւ այլ մերձաւոր յարաբերութիւնները»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Անասունների մէջ ժանտախտը դեռ շարունակվում է։ Հրէական թաղի նախիրի մէջ էլ ընկաւ։ Ցաւը սաստիկ կոտորածներ է անում մեր գաւառի Անիզ գիւղում։ Անասնաբոյծները մեծ քանակութեամբ հիւանդ անասուններ են սպանել տալիս։ Անց ու դարձը այդ տեղերում արգելված է. մարդիկ սարսափած են»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքային ժողովարանի վարչութիւնը նորերս ստացել է մի անստորագիր բողոքագիր, գրված կանացի հաւաքական մասնակցութեամբ, հետեւեալ բովանդակութեամբ։ — Թղթախաղութիւնը ակմբանոցում հասել է ծայրայեղ անբարոյականութեան։ «Բակկարա» խաղը դարձել է կեղեքումների եւ թալանների ասպարէզ աւազակների համար։ Մեր ամուսինները, գանվելով անօրինակ մոլութիւնների մէջ, անգամ ուրացել են իրանց գերդաստանները եւ թողել երեխաներին առանց մի կտոր հացի։—Մենք, կանայքս, բողոքելով աւերման եւ կործանմունքի այս չարժառիթի դէմ, հրաւիրում ենք ակմբանոցի վարչութեան բարեհաճ ուշադրութիւնը եւ խնդրում վերջ դնել այս ցաւալի երեւոյթին, արգելելով սանձարձակ ու տաք թղթախաղութիւնը «կլուբի» մէջ, հակառակ դէպքում մենք կանայքս կը բողոքենք երկրիս պ. կառավարչապետի առաջ»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Յունիսի 18-ին այստեղի նորակառոյց ժողովարանի դահլիճում, յօգուտ նոյն ժողովարանի, սիրողները ներկայացրին «Կոթ-կոթ» եւ «Մօդա է» վոդեվիլները։ Ներկայացումը աջող անցաւ թէ մուտքի եւ թէ խաղի կողմից։ Ներկայացումից յետոյ սկսվեցին պարեր, որոնք տեւեցին մինչեւ ժամը 12-ը։ Ժողովուրդը ցրվեց գոհ։ Զուտ արդիւնք մնաց 104 ր.։ Ցանկալի է, որ այդ ներկայացումը վերջինը չը լինի»։

—

ԶԻԲՐԱՑԷԼԻ գաւառից մեզ գրում են. «Այս տարի ցորենի բերքը մեզանում առատ չէ եղել. դաշտային տեղերում, դէպի Երասխի ափերը, հունձը շատ նուազ է եղել, որովհետեւ մորեխը տեղ տեղ սարսափելի վնասներ է տուել։ Կառավարութեան ձեռք առած միջոցները մորեխը ոչնչացնելու համար ապարդիւն անցան։ Գաւառիս լեռնային մասում, որտեղ, կլիմայի խստութեան պատճառով, մորեխը անկարող է եղել աւերածութիւններ անել, հունձը եղել է բաւարար, օր. Հաղրութ, Գոր եւ Իդիլլեցիք մեծ գիւղերը, իւրաքանչիւրը իր շրջակայ փոքր գիւղերով, բաւական առատ բերք են ստացել։ Թէեւ մեր ասածներից երեւում է, որ տեղ տեղ տարվայ բերքը մեզանում բաւարար, իսկ տեղ տեղ էլ նուազ է եղել։ այնուամենայնիւ հացի թանգանալու ոչ մի նշան չէ երեւում. ցորենը ծախվում է ներկայումս 1 ր. 10 կոպէկից 1 ր. 20 կոպէկ. այս ընդունված է մեր մէջ ցորենի էժան գին. մնացած ուտելիքները չափազանց թանգ են. ոչխարի մսի ֆունտը ծախվում է 12 կոպէկ. իւղը շատ թանգ է եւ չէ էլ ճարվում»։

—

ԱՋԱԴԱԿԻՑ (Դարալագեազի գաւառ) մեզ գրում են. «Վաչխառութիւնը սովորական երեւոյթ է մեզնում. օրինակ Բաբա Խըլղաթեանը վեր է առնում յայտնի վաչխառուից մի բեռ ցորեն (10 պուդ) եւ 14 ռուբլի փող եւ երկու տարուց յետոյ փոխարէն այդ գումարի տալիս է 80 հատ մեծ ահագին գերաններ, որոնցից ամեն մէկը արժէ երեք ռուբլի եւ կէս։ 24 ռուբլու փոխարէն ստանում են երեք հարիւր ռուբլի եւ այլն։ Եթէ մի քանի տարիներ էլ այդպէս շարունակվի, մեր ողորմելի գիւղացիները, իրանց վերջին հողն ու քարը նրանց յանձնելով բազմապատկված տոկոսների փոխարէն, ինքները իրանց զաւակների հետ պէտք է թափառեն քաղաքէ քաղաք, ինչպէս գաղթականներ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, յունիսի 18-ին

Իբրեւ օտարերկրացի, բայց մի եւ նոյն ժամանակ բաւական տարիներից ի վեր Ատրպատականում, մասնաւորապէս Սալմաստում, մընացող եւ ազգային զանազան պաշտօններ վարող, պարտք եմ համարում տալ մի քանի բացատրութիւններ վերջին ժամանակներս «Մըշակում» հրատարակված այն յօդուածների մասին, որոնք պատկերացնում էին Սալմաստի ցաւերը եւ հրաւէր էին կարդում կարող անձանց՝ միջոցներ ստեղծելու այդ վէրքերը բուժելու համար։

Խճճումներով միասին յօդուածագիրների հաղորդած տեղեկութիւնների մասամբ իրաւացի լինելը, պարտք եմ համարում յայտնել, որ դրանք գրել են իրանց յօդուածները խիստ չափազանցրած ձեւով։

Ցաւալի է իսկապէս շահագործված տեսնել հարիւր հազարաւոր անձանց անբիծ արիւնը այնպիսի մարդկանց միջոցով, որոնք յաւակնութիւն ունեն պաշտպան ներկայացնելու իրանց այդ անմեղ արեան, բայց աւելի ցաւալի է յօդուածագիրների այն ուղղութիւնը, որով «չորի հետ՝ վառել են կամենում եւ թացը», ամբաստանելով հաւասարաբար բոլոր օտարերկրացիներին, իբրեւ կամակից եւ գործակից «ենիչէրի» անունով մկրտված մի կարգ մարդկանց։

Թէ օտարերկրացիների մէջ գտնվել են այնպիսիները, որոնք ամեն կերպ զոհողութիւն են յանձն առել եւ մեծ զարկ տուել Սալմասի կրթական գործին ու պաշտպանել նրանց դժբաղդութեան ժամանակ ամեն տեսակ վտանգներից, հիմնադիրներ են եղել անհատական եւ հաւաքական շատ ձեռնարկութիւնների, անուրանալի ճշմարտութիւններ են. դրա համար մեր կողմից մանրամասն կրկնութիւնը աւելորդ կը լինի։

Միմիայն, իբրեւ Հաֆթվանի ազգային վարժարանի մի պաշտօնեայ, աւելորդ չեմ համարում տալ համառօտ ծանօթութիւն Հաֆթվանում ապրող օտարերկրացիների մասին։

Ինչպէս առաջ, նոյնպէս եւ այժմ, վանեցիներն են եղել մեծամասնութիւն կազմողները Հաֆթվանի օտարերկրացիների մէջ. բայց ոչ մի ժամանակ չէ տեսնված, որ դրանք ապրած լինեն գիւղի հաշուով, բռնութիւններ գործ դրած լինեն տակարների եւ անպաշտպանների վրա—(թէեւ եղել են եւ կան մի երկու բացառութիւն կազմողներ, որոնք իրանց հրէշային գործերով արժանացել են իսկապէս ժողովրդի արդար զզուանքին եւ դատապարտվել են իրանց հայենակիցների ճշմարիտ զայրոյթին եւ բարոյական պատիժներին)—ընդհակառակը, դրանք նպաստել են իրանց կարողութեան չափ արհեստների զարգացմանը, մեծ մասամբ են տուել կրթական գործին, հիմնելով եւ յարատեւութեան մէջ պահելով ու ճոխացնելով գրադարանը, վարժարանը «Տէր-Թոդիկեան» դրութիւնից երկդասեանի վերածելով, կազմակերպելով թատերական ներկայացումներ, գիշերային դասախօսութիւններ եւ այլն։

Ներկայումս Հաֆթվանում կան մօտաւորապէս 15 վանեցիներ, որոնք պարապում են ուսուցչութեամբ, երկաթագործութեամբ, պղնձագործութեամբ, հիւսնութեամբ, դերձակութեամբ, զինագործութեամբ եւ այլն գործերով, ինչպէս նաեւ առեւտուրով։

Հաֆթվանի ազգ. վարժարանի տեսուչ՝

Ն. Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հեռագրում են արտասահմանեան լրագիրներին. «Եթէ կարանտինը շարունակվի, հետեւութեամբ կարող են լուրջ անկարգութիւններ ծագել նաւահանգստի բանուորների մէջ, որոնք ահա երկու ամիս է, որ անգործ են մնում։ Այդ բանուորները, որոնք միշտ հակամէտ են դէպի բռնաբարութիւնները եւ որոնց թիւը հասնում է 5,000-ի, խիստ վտանգաւոր տարր են ներկայացնում թիւրքական մայրաքաղաքում։ Անկարգութիւնների առաջն առնելու համար քաղաքային վարչութիւնը որոշել է տալ նրանց չէքէր ձրիաբար ուտելեղէնի մինչեւ կարանտինի վերացումը։ Լուրերին նայելով, Կ. Պոլսի արուարձաններում արդէն տեղի են ունեցել ժանտախտից հիւանդանալու դէպքեր։ Ազգաբնակութիւնը դանդատվում է ոստիկանական վարչութեան կամայական գործողութիւններից, որ անյապաղ փակում է այն տները, որտեղ պատահում են նոյն իսկ ամենաթեթեւ, ժանտախտի հետ ոչ մի կապ չունեցող հիւանդութիւններ։ Մինչեւ անգամ մի բժշկի տուն, որ վերադարձել էր տիֆով հիւանդացածի մօտից, շրջապատված էր ոստիկանական կօրդօնով։

—«Vorwärts» հաղորդում է, թէ գերմանական կայսր Վիլհելմ վերջացրել է իր պատմական տեսութիւնը, որ վերաբերում է եւրոպական զօրքերի միջոցով չինական Տակու նաւահանգիստը գրաւելուն։ Կայսրի այս գրական աշխատութիւնը դուրս է եկել բաւական մեծ. նա բաղկացած է 250 երեսից, սովորական գրքի մեծութեամբ եւ զարդարված է նկարներով հէնց իրան՝ կայսրի ձեռքով։ Այս գրքի առաջին օրինակները պէտք է ուղարկվեն այն թագաւորներին, որոնց զօրքերը մասնակցել են Տակուի գրաւմանը, իսկ մնացածները կը վաճառվեն։ Վաճառման ժամանակը դեռ եւս չէ որոշված։

—«Standard» լրագրի ասելով, անգլիական պարլամէնտի նստաշրջանը կը փակվի օգոստոսի 2-ին, յաջենայն դէպս ոչ ուշ օգոստոսի 4-ից։ Ասում են, թէ Ջոզէֆ Չէմբէրլէն շուտով կուղեւորվի Ամերիկա. նա մտադիր է մի ճանապարհորդութիւն կատարել Միացեալ-Նահանգներում բօէրասիրական հոսանքի դէմ մաքառելու համար։

—Սարաֆովի եւ մակեդոնական կոմիտէի միւս անդամների դատաքննութիւնը կը սկսվի օգոստոսի վերջին։ Իրրեւ պաշտպաններ, որոնց թիւը տասնեւհինգից աւելի է, հանդէս են եկել մեծ մասամբ ամենանշանաւոր փաստաբաններ զանազան կուսակցութիւններից։ Մեղադրական նիւթի մանրամասն ուսումնասիրութիւնը բերեց փաստաբաններին այն միահամուռ համոզման, որ Սարաֆով եւ նրա ընկերակիցները կարդարանան անշուշտ, որովհետեւ մեղադրական ապացոյցները բաւարար չեն։ Բայց կառավարութեան ձեռքում մնում է մի զօրեղ միջոց մակեդոնական կոմիտէի դէմ։ Կառավարութիւնը կարող է ձգձգել դատաստանական գործը մի քանի տարի եւ տեղափոխել նրան վճռաբեկ ատեանը։ Այդ ժամանակի ընթացքում, նա իրաւունք ունի պահել Սարաֆովին եւ նրա ընկերներին բանտում, որովհետեւ, բոլգարական օրէնքներով, կառավարութեանը չէ կարելի ստիպել, որ նա երաշխաւորութեամբ արձակէ այն բանտարկեալներին, որոնք մեղադրվում են ապանութեան գործակից լինելու մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—«Женскій Гласъ» լրագրի ասելով, Սոֆիայի բարձրագոյն դպրոցի ուսումնական խորհուրդը, իր վերջին նիստում, վճռել է այսուհետեւ բարձրագոյն դպրոցը ընդունել նաեւ ուսանողուհիներ այն կանանց թվից, որոնք աւարտել են կանանց գիմնազիաները։

—Յայտնի ամերիկացի արքիհարուստ Էնդրի Կարնէջի, որ առատաձեռն կերպով միլիոններ է բաժանում բարեգործական նպատակով, նորերս դէպք ունեցաւ տիրել իր համեստ ծագումը։ Նա իմացաւ, որ ինքը պարտք ունի, որի մասին գաղափար անգամ չունէր մինչեւ այժմ։ Երբ նրա ծնողները, իրան հետներն առած (ինքը այն ժամանակ 10 տարեկան էր) հեռացան իրանց հայրենի Շոտլանդիայից և ուղեւորվեցին Ամերիկայի Միացեալ-Նահանգները բախտ փնտռելու, նը-բանք պարտք վերցրին իրանց բարեկամուհի Լէննոքսից 91 ֆրանկ 75 սանտիմ (մօտ 35 ռուբլի), որպէս զի լրացնէին ճանապարհորդութեան համար անհրաժեշտ գումարը։ Նրանք պարտաւորվեցին վերադարձնել այդ գումարը հէնց որ բախտը ժպտայ նրանց։ Այն ժամանակից անցել է 53 տարի։ Ինքը Լէննոքս վաղուց մեռել է, բայց նա թողել է երկու աղջիկ, որոնք խիստ կարօտութեան մէջ են։ Լէննոքսի եղբօրորդին դատարանով պահանջ յայտնեց Կարնէջից 220 ֆրանկ գումարի (մօտ 80 ռուբլի), որ գոյացել է նախկին պարտքի տոկոսների բարդվելով։ Կարնէջին, համոզվելով, որ պահանջը իրաւացի է, մտադիր է շատ մեծ գումար տալ այն կնոջ ժառանգներին, որ իր պարտք տուած չնչին գումարով նպաստեց նրա հարստանալուն։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 յուլիսի

ԿՐՕՆԲԷՐԳ, ժամի 4 կէսօրից յետոյ։ Վիկտորիա կայսրուհու առողջութիւնը անփոփոխ է. կայսրն ու կայսրուհին հիւանդի մօտ են։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորը, որ իր զբօսանաւով Կոուսի մօտ է, վերադառնում է Լօնդոն եւ կէսօրից յետոյ ուղեւորվելու է Կրօնբէրգ։

ԿԻԻՍՏԻՆԶԻ։ Փոխ-ծովապետ Հիլդէբրանդտ երէկ մի քանի այցելութիւններ արեց։ Երեկոյեան քաղաքային խորհուրդը պարահանդէս կազմեց, որից յետոյ փոխ-ծովապետը իր չքախմբով ուղեւորվեց Սինայա, ուր ունկնդրութեան կընդունվի թագաւորի մօտ։ Երեկոյեան ժամի հինգին նորից կը վերադառնայ Կիւստէնջէ։

ԲԵԼԳՐԱԴ։ Սկուպչինայի անդամ մինչեւ այժմ ընտրվել են կառավարութեան 88 կողմնակիցներ, որոնց թւում 76 արժատականներ, 4 անկախ արժատականներ եւ 7 ազատամիտներ եւ, ի միջի այլոց, Ավակումովիչ եւ Ռիբարց. 30 լիազօրութիւն ունեցող 4 շրջանում կրկնաքուէարկութիւններ են լինելու։ Ընտրութիւններին մասնակցում են արտասովոր թւով ընտրողներ։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Անգլիական «Glori» պատերազմական նաւը եկաւ Աժոյից. այնտեղ ամեն ինչ հանգիստ է։ Աժոյում մնում են երկու անգլիական ռազմանաւեր։

Կ. ՊՕԼԻՍ։ Սերբիական դեսպանը աստրոհունգարական դեսպանին մի յայտագիր յանձնեց, որով խնդրում է միջնորդ հանդիսանալ՝ Զիբէֆչիի մօտ գրաւված պօստային ծրարների հարցում։ Յայտագրում ասված է, թէ, չը նայելով Թէֆիկ փաշայի խոստումներին, այդ ծրարները մինչեւ այժմ էլ չեն վերադարձված։ Այնուհետեւ դեսպանն ասում է, թէ արտաքին գործերի մինիստրը դիտաւորութիւն է յայտնել սահմանափակիչ միջոցներ ձեռք առնել ուրիշ պետութիւնների պօստատների եւ հիւպատոսարանների դէմ եւս։—Այն թիւրքահպատակ սերբերի թիւը, որոնք գարունքուանից մինչեւ օրս Հին Սերբիայից գաղթել են Սերբիա, հասնում է հազար հոգու։

ԼՕՆԴՕՆ։ Ֆրանսիական ներկայացուցիչը Պէկինում՝ տեղեկութիւն է ստացել, որ Ֆրանսիան մտադիր է ուղղագիծ երկաթուղի չինել Պաստինֆուից դէպի Տեանձին, Զինաստանի համաձայնութեամբ կամ առանց նրա համաձայնութեան։

Պէկին։ Օտարազգի զօրքերի՝ Պէկինից հեռանալու պատրաստութիւնները դժգոհութիւն են զարթեցնում Պէկինի օտարազգի բնակիչների մէջ։ Նրանք ասում են, որ ստորին դասակարգերի ժողովուրդը այժմ եւ իսկ թշնամական տրամադրութիւն է սկսում ցոյց տալ, որովհետեւ զօրքերը պատրաստվում են հեռանալ քաղաքից, եւ չինացիները, իրանց հին սովորութեամբ, նորից սկսել են վիրաւորել ու հրել օտարազգիներին փողոցներում։

ԼՕՆԴՕՆ։ Որովհետեւ նոր տեղեկութիւններ են ստացվել այրի կայսրուհու առողջութեան մասին, Թագաւորը, երեւի, այսօր ճանապարհ չի ընկնի դէպի Գերմանիա։

ԿՐՕՆԲԻԼԳ։ Վիկտորիա կայսրուհին վախճանվեց յերեկվայ 6¼ ժամին։

24 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 23-ին Մեծ Պետերհոֆեան պալատում պատիւ ունեցաւ ներկայանալ եւ ընծայ մատուցանել Նորին Մեծութեան՝ Մարսկկոյից եկած արտակարգ դեսպանութիւնը։

Յուլիսի 23-ին Պետերբուրգ ժամանեցին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի Օգոստափառ եղբայր Դանիական պրինց Վոլդեմար եւ նրա ամուսինը Դանիական պրինցուհի Մարիա։

Հրաման զինուորական վարչութեան. «Այս տարվայ մայիսի 23-ին, 11-րդ արեւելեան-սիբիրական եւ հրացանաձիգ գնդի զինուոր Ալեքսէյ Սերգիեվսկին, պահապան լինելով Մունկդէնի կայսերական պալատի դարպասի մօտ, ձեռքին գնդակի երեք թափանց վերք ստացաւ անյայտ անձից։ Զը նայելով սաստիկ ցաւին եւ արիւնահոսութեան, հրացանաձիգ Սերգիեվսկին մնաց իր տեղում, կատարելով իր պահապանութիւնը, մինչեւ որ նրան չը փոխեց պահապանափոխը։ Այս տարվայ յուլիսի 12-ին Բաթումի Միքայէլեան բերդի Ա. տառակիր մարտկոցում տեղի ունեցած պայթիւնից, ի թիւս այլոց, սպանվեցին պահապանապետը եւ պահապանափոխը։ Այդ պատճառով պահապան կանոնիր Եգոր Բուցիկին շարունակեց իր պահապանութիւնը եւ փոխվեց միայն այն ժամանակ, երբ Բարձրագոյն հրաման ստացվեց դրա մասին, 14½ ժամ անընդհատ պաշտօնավարելով իբր պահապան։ Երբ վերոյիշեալ դէպքերը զեկուցվեցին Թագաւորին, Նորին Մեծութիւնը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել՝ յայտնել հրացանաձիգ Սերգիեվսկուն Արքայական շնորհակալութիւն եւ շնորհել նրան արծաթէ մէդալ կրծքի վրա գեօրգեան ժապաւէնով կրելու, իսկ կորիճ կանոնիր Բուցիկինին ոսկէ մէդալ՝ կրծքի վրա գէօրգեան ժապաւէնով կրելու։ Այս մասին յայտնվում է զինուորական վարչութեան այն պատճառով, որ, թէեւ վերոյիշեալների նման դէպքեր հազուագիւտ չեն մեր զօրքում, այնուամենայնիւ նրանք պայծառ օրինակ են ծառայում հաստատ դիսցիպլինայի եւ գիտակցական վերաբերման դէպի ծառայական պարտականութիւնը, որոնք անյողդողդ են մնում նոյն իսկ բացառիկ հանգամանքներում»։

ԿՐՕՆԲԻԼԳ։ Վիկտորիա կայսրուհին հանգիստ վախճանվեց. մահվան մահիճի մօտ էին կայսրը, կայսրուհին եւ կայսերական տան այստեղ գտնուող անդամները։

ՍԻՆԱՑԱ։ Փոխ-ծովապետ Հիլդէբրանդտ եւ ռուսաց ռազմանաւատորմի օֆիցէրները ժամանեցին այստեղ կէսօրին։ Երկաթուղու կայարանը տօնարար զարդարված էր։ Հիւրերին ընդունեցին՝ նախ արքայական զինուորական կաբինէտի պետ գեներալ Վարտիադի Թագաւորի անունից, ապա՝ ռուս դեսպանութեան քարտուղարները։ Փոխ-ծովապետը եւ օֆիցէրները կառքերով գնացին Պէյէչ դղեակը, ուր ի պատիւ նրանց պատրաստված էր հանդիսաւոր նախաճաշ։

ՊԱՐԻԶ։ Լուրերով, արտաքին գործերի մինիստրութեան մէջ քննվում է Կոնստանի առաջարկութիւնը այն մասին, որ իրան յետ կանչեն Կ. Պոլսից եւ Թիւրքայ դեսպան Մունիր բէյին յետ տան անցաթուղթերը, նկատի ունենալով Կ. Պոլսի «Quais et chantiers» ընկերութեան առիթով ծագած դժուարութիւնները։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Երկրագործական բիւրոյի տեղեկութիւններով, բամբակի վիճակը Տեխասում առաջուանից 12% ցած է, իսկ Արկանզասում՝ 15% ցած. վատանալու պատճառը ընդհանրապէս երաշտն է, բայց արեւելեան նահանգներում, ընդհակառակը, չափազանց խոնաւութիւնը. բամբակի միջին վիճակն է 77,2։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՄԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Դաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզաքեռ. հիւանդ.

Ա. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ա. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ՝

Ն. Ն. Ռոսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ք. Ի. Գզելիեվ—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Ս. Ա. Դաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ իր ատեանում, յուլիս ամսի 28-ին, յերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ կապալով տալու բէտոնէ ջրուղու վերաշինութիւնը հատ. 0,375×0,25 պ. ս., երկար. մօտ 62,00 պ. ս., Վօդօվոզնայա փողոցում եղած ջրուղուց մինչեւ Սապեօրնիյ փողոցը, 1154 ր. գումարի։ Աճուրդին ժամանակել ցանկացողները կարող են տեսնել պայմանները Վարչութեան Շինարարական բաժնում բոլոր լի օրերը յերեկվայ ժամի 8—1։

1—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ԻՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ Նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ան Ֆլապէս՝ պօստով։ 48—100

„ՄԱՐԻԱՆԱ“

Դրամա 3 գործ. եւ վերջաբանով.

Խ. ԷՋԷԳԱՐԱՑԻ

Թարգմ. Արսէն Կրասիլնիկեանի

Այս հրատարակութեան վաճառման ամբողջ արդիւնքը յատկացնվում է «ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ»։

Գիրքը տպված է ամենաընտիր թղթի վրա, բաղկացած է 248 երեսից եւ արժէ 1 ռուբլի։

Удостоен. награды національной Академіи Земледѣлія, Промышленности и Торговли въ Парижѣ,
ПИСЬМЕННОЕ ПРЕПОДАВАНІЕ ДВОЙНОЙ
БУХГАЛТЕРІИ
вполнѣ замѣняющее устное преподаваніе. Условія и пробныя письма высылаю безплатно.
Плата умѣренная. Преподаватель бухгалтеріи
А. Н. ЯНКОВСКІЙ, въ Ригѣ.

ԲԻՓԼԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

ԼԻՆԵԼՈՎ ՀՄՈՒՏ

հայոց հին եւ նոր լեզուների եւ պատմութեան, ցանկանում եմ ուսուցչութեան պաշտօն ընտանէնել Թաւրիզի կամ Թէհրանի հայոց ուսումնարաններում։

Դիմել՝ Въ конторѣ Хачатурянца, Амайаку Карманяну. 3—5

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւնը ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնօտների պրոթեզներ (резекціонные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։
5—25

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(Зубной врачъ)

Օր. Շ. ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝

Առաւօտեան 9—2 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Հասցէն՝ Սուրբ-Նշան եկեղեցու դաւթում։
2—2

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ Թիֆլիսում 1 ր. 50 կ., քաղաքից դուրս 2 ր.։ Յատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ հաւեստ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ր.։ 2) Վրթանէս Փափազեանի «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» գրքոյկը, որ Թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.։—Ցիչեալ երկու գիրքը ի վաճառ կը հանվեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, մօտաւորապէս յուլիսի վերջին։ 3) Աչքդ Զիւանիի «Քեարամ եւ Ասլիի» հէքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.։ Գումարով գնողներին զիջումն կը լինի։ «Վտակի» համար բաժանորդագրութիւնը կենտրոնական գրավաճառանոցում շարունակվում է։

Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 4—10

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին ժամանակագրական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում առանձնվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ ուղղագրութիւն (ուղղագրութիւն)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. շ.) 10—25

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլաեվսկայա, № 88.

Խնդիրքների ընդունելութիւնն սկսված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 ռուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ.

1) Հաշուապահութիւն
2) Բանկային գործ
3) Առեւտրական թուաբանութիւն
4) Թուաբանութիւն հաշուեցոյցով։
} Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէննէր, դասարանների հիմնադիրը.
5) Տեխնօլոգիա
6) Ապրանքագիտութիւն
7) Թղթակցութիւն.
} Մ. Ի. Զէնգէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.
8) Առեւտրական օրէնքներ
9) Առեւտուր
} Վ. Ս. Մօսկալեօվ, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժենէր-երկրաչափ.

Ոչ-պարտադիր առարկաներ

1) Ֆրանսիական լեզու—Ի. Կ. Լիոզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Իւ. Ֆ. Գրուժլիկ, դաս. Թիֆլ. ռէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա Բրօն-ֆօն-Բրէննէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդիրքները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայլովսկի պրոսպէկտ, № 71, իսկ յետոյ դասարանների դիւանատունը, Նիկոլաեվսկայա, № 88. 6—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմօնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են ժամանակագրական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում եւ կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե.) 6—12

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Іюля 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.